23. ԻՍՈՒՍԻ ԳԵՐԵԶՄԱՆ

Էրկու զանգին մարթ էլեր կէրթին Երուսաղեմ Իսուսի գլերեզմընին ուխտի:

Խասան մեյ գլեղիմ սոճև, էնտեղ մեյ ծառիմ տակ նստան խանգլստանալու:

Տեսան էնդեխեն մարթմ էկավ, ինոնց ասաց. - Ախպերնե՛ր, էլեք էրթանք մեր տուն, քյիչմ խաց կերեքյ, խանգստացեքյ, էլըմ ծեր էրթալիքյ տեղ կնանցեք:

Մարթեր ինոր խաթրից չէլան: Էլանն ինոր խետ կնանցին ինոնց տուն:

Նստան խոշ-բեռշ էլանն, քիչըմ գրյուցեցին, տեսան, որ էսա մարթն էլանվ տյուս:

Էն էրկու մարթերաց մեյն տեսավ, որ էտա մարթ կնանց աղփի կոլոնի վիրվից մեյ սատկուլ խավմ առեց, թախթըփեց, տրեց ուր փեշի տակ, տարավ տուն:

Քիչըմ վերճ սեղան տրին, սեղնի վերեն քիչըմ խաց կեր, մեյ խատ էլ իփուկ, կարմրցուկ խավ:

Էն ծոճի տիսնող մարթ ծեռ չիտուր խավին, ամմա էտա մեկելն կուշտ-կուշտ կերավ:

Վերճ որ էլանն կէրթին, էն խավ տիսնողն ծածուկ ուրենց տան տիրոջ տարավ մեյ տեխ, խարցուց, ասաց. - Թող աստված վկա էլնի մեչ զի քյե, որ քյո գաղտնիքյ զիզնից ուրիշին չընցնե, արե տյու ղողրին ասա, ընչի՞ էն սատկած խավ կիրիցուցիր մե, քեզնից վո՞վ ուզեր էր, որ տյու կոնախ տանիր, յան խավ կարմրցուցիր, ես կուզեմ, որ ասես իտոր պատմութեն:

- Է՛, մա՛րթ, - կասի, - քանի որ տյու աստծու սեր տվիր, պատմեմ: Մեր տուն էսա գլեղի ճեռչ խանադան տներաց մեյն էլեր ի: Մեր տան մեչեն ոչ մեկ օր տասնով, քսանով մըսանֆըր էրթանցող-գլանցող պակաս չէլե: Ամմա՛, արե տես, որ էսօր աղքտացեր եմ, պանմ չունեմ տալու: Է՛, չէլնե էլ որ մեր տուն առանց մըսանֆըրի էլնի, ինոր խամար եփ ծի պիրի, խատուկ խավից զատ ուրիշ պանմ չունեցա ծե կիրիցուցելու: Զե՞ս ավատա, արե քյե ուրիշ պանմ էլ շանց տամ:

Մարթու ծեռնից կպոնի, կտանի թորվան վերևն: Թորվան պերան կպանա, պուտկի խուփեր կվերցի, կասի. - Տե՛ս, թե էսա պուտկներ ի՞նչ եմ լցե:

Մարթն կիրիշկա, կտիսնա քա՛ր:

- Կիտե՞ս ընչի խամար են: Տղեյներս անութի էին, խաց չկեր, կեր չկեր, տի ուտին, քյարեր լցեր եմ պուտուկ, իփեր եմ, ինոնց խապեր եմ թե քյնեքյ, առատուն էլեքյ վեր, կեր կիրեքյ, խո տեսաքյ թե պուտկով կեր եմ իփե: Ահա իմ վիճակ:

Երուսաղեմ էրթանցող մարթ քիչմ կմտածի, կմտածի, կասի. - Ախպե՛ր, ես պիտի էրթիմ Երուսաղեմ, Իսուսի գլերեզմնին ուխտի, ինոր վերեն խինգլ խարիր ոսկի

պիտի տնիմ. ամմա. չանք էսա տեղն էլ ավելի մեծ Իսուսի գլերեզման չէլնե. ատ էսա փնարեն քյե. ես կտառնամ ետ:

Մարթ քիչմ հընգյ-մընգյ կանի. սորա կառնի:

Երուսաղեմ էրթացող կէրթա ուր ինգյրոչ կասի. - Ես էլ չեմ գյնմ. կէրթաս տյու կնա:

- Յա՛, ի՞նչ էլնվ քյե, մա՛րթ. չում էսա տեղ խասար ընչի՞ ետ կտառնաս:

- Չէ՛, չեմ իգյնմ:

Մարթն մենակ գնաց Երուսաղեմ, էսա մեկելն էլ տուսցավ ուր գյեղ:

Երուսաղեմ էրթնցողն էն գյնխ որ կնանց պիտի մոմ վնոեր Իսուսի գլերեզմնին, ուր նվեր տեր, տեսավ հըմենից շոտ էն ուր ինգյեր էկավ մոմ վնոեց. մեկ էլ իրիշկաց, տեսավ, որ ուր ինգըրոչ գյըլխու վերեն լեռս ի կաթե:

- Վա՛յ, սութասան մարթ, - ասաց, - ինգյեր զի խապեց. կարճ ճնմխով իկե ըստեղ:

Ուխտն արաց պրծավ, էլավ կնաց գյեղ, էտա մարթ կընղնվ, ասաց. - Ախպե՛ր. ես քյե ի՞նչ ի արե, որ խե զի չէկնր Երուսաղեմ, զի խապեցիր, ասիր՝ ետ կտնոնամ, տյու մասե, հըմենից շոտ գլերեզմնին մոմ կպուցող տյու էլնր:

- Ի՞նչ կասես, մարթ, ես Երուսաղեմ չեմ իկե:

- Ընչի՞, ես չտեսա՞:

Վերջ կէրթնն գյեղական կպիրեն, նոր ինոնքյ կասեն, թե էսա մարթ խինգյ ամիս ի, որ տնոցե իկե գյեղ. Երուսաղեմ չէլե: